

*«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՅ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ» 3/06 ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ\**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է .

1. Հաստատել «Ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և դրանց պատասխանատու անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությանը ցանկը, ձևերը և պարբերականությունը» կանոնակարգ 3/06-ը՝ համաձայն հավելվածի (լցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ  
5 նոյեմբերի 2007 թ., N 335-Ն*

\* Ոչ պաշտոնական հրատարակություն:

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. հոկտեմբերի 30-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.12.07 թ. (ՀՀԳՏ N33 (273), 17.12.07):

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 3 / 0 6**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և դրանց պատասխանատու անձանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակման նվազագույն պահանջները և հրապարակման կարգը:

2. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունները սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը հրապարակում են առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը և (կամ) հրապարակում և օրական կտրվածքով թարմացնում են իրենց ինտերնետային կայքում:

3. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունները սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը մամուլում հրապարակելու դեպքում, հրապարակելուց հետո հնգօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) պատասխանատու ստորաբաժանմանն են ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

4. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունը ինտերնետային կայքում տեղեկատվության հրապարակման դեպքում, ինտերնետային կայքի գործարկման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, Կենտրոնական բանկ է ներկայացնում ինտերնետային կայքի հասցեն: Ինտերնետային կայքի հասցեի փոփոխության դեպքում կայքի նոր հասցեն տրամադրվում է Կենտրոնական բանկին փոփոխությունից հետո՝ 5 աշխատանքային օրվա ժամկետում:

**ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունները իրենց ինտերնետային կայքում և (կամ) մամուլում հրապարակում են առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները,
- 2) ապահովագրական բրոքերային կազմակերպության պատասխանատու անձանց (գործադիր տնօրեն կամ վարչության նախագահ, վարչության անդամներ, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ) ցանկը՝ ներառյալ պատասխանատու անձանց անուն, ազգանունը, ապահովագրական բրոքերային կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը, ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձի՝ Կենտրոնական բանկի ռեգիստրում գրանցման համարը,
- 3) ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխամասի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հասցեն, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն,
- 4) Կենտրոնական բանկի ապահովագրական բրոքերային կազմակերպությունների ռեգիստրի գրանցման համարը,
- 5) ապահովագրական բրոքերային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց ցանկը, մասնակցության չափը, նշանակալից մասնակիցների գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար), ինչպես նաև այն ընկերությունների ցանկը, գործունեության տեսակը, որոնց կանոնադրական կապիտալում ապահովագրական բրոքերային կազմակերպությունն ունի նշանակալից մասնակցություն և մասնակցության չափը,
- 6) օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի ցանկը և (կամ) հղում դրանց դրույթներին, որոնք կարգավորում են ապահովագրական բրոքերի ծառայությունների մատուցումը,
- 7) ապահովագրական բրոքերային կազմակերպության լիցենզիայի համարը և սերիան:

6. Եթե ապահովագրական բրոքերային կազմակերպությունն ընդգրկված է որևէ խմբի, միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա հրապարակում է նաև համապատասխանաբար խմբի, միության կառուցվածքը՝ սխեմայի տեսքով, կամ հղում է տրվում համապատասխան ինտերնետային էջին, որտեղ առկա է այդ կառուցվածքի գծապատկերային (սխեմատիկ) նկարագրությունը:

7. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակվող (գովազդվող) տեղեկությունները չեն կարող պարունակել ապակողմնորոշող բառեր կամ արտահայտություններ:

### **ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԱՊԱՐՈՆԱԿԵԼ ԱՊԱԿՈՂՄՈՐՈՇՈՂ ԲԱՅՈՒՆ ԿԱՄ ԱՐՏԱԿԱՅՏՈՒՅՈՒՆՆԵՐ:**

8. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները պետք է հասանելի լինեն հաճախորդների համար ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխամասային գրասենյակում, մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ առանձին գրքույկների կամ հաճախորդների համար հասանելի ձևով:

9. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակվող տեղեկություններում, ինչպես նաև տպագրված առանձին գրքույկներում պետք է առկա լինեն մատուցվող բոլոր ծառայությունների ցանկը, ինչպես նաև այն հեռախոսահամարները, որոնցով հաճախորդը կկարողանա սպառիչ տեղեկություններ ստանալ ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

10. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակված տեղեկությունները ներկայացվում են պարզ և սպառողների համար մատչելի լեզվով:

11. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններում առնվազն պետք է առկա լինի՝ ապահովագրական բրոքերային կազմակերպության միջոցով ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, վերաապահովագրավճարների, վերաապահովագրողից ստացվող հատուցումների փոխանցումների իրականացման տևողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, եթե ապահովագրական բրոքերային կազմակերպությունը իրականացնում է նման գործառնություն: